

6 Եւ ասացեալ զայս երանելոյն՝ չուեցին միաբան ամենեքեան յաշխարհէն Աղուանից յերկիրն Հայոց ի գաւառն Այրարատոյ. եւ անդ զաւուրս դառնաշունչ աւդոյ ձմերայնոյն¹ ըստ սովորութեան իւրեանց դադարեալք՝ փութային առ հասարակ անձկով զաւուրս գարնանային ամսոյն տեսանել եւ յաւր իւրեանց նահատակութեան պսակին հասանել: 7 Քանզի ոչ եւս ինչ այլ բնաւ ածեր զմտաւ ոք զյաղթութիւն եւ կամ զպարտումն, այլ ցանկացեալք, որպէս ծարաւիք, բաժակին փրկութեան՝ իւրեանց կատարմանն պատահել եւ ընդունել մնային:

8 Իսկ նենգաւոր իշխանն Սիւնեաց Վասակ ոչ երբեք դադարեր գրել նամականի առ իշխանս եւ շինականս եւ քահանայս աշխարհիս Հայոց. ցուցաներ իմն բերեալս ի դրանէ ուխտս սուտս ի վկայութիւնս ընդունայնս, թէ «Արքայից արքայ զգրիստոնէութիւն շնորհեաց աշխարհի, եւ զվնաս կոտորածի մոգուցն չխնդրէ. եւ զապստամբութենէն ասէ, թէ «բնաւ եւ յիշեմ իսկ ոչ, միայն թէ ի բաց դառնայք ի խրատուէ եւ ի բանից Վարդանայ, եւ մի՛ կորնչիք ընդ դմա՞»»: 9 Եւ զինքենէ գրէ ուխտանենզն Վասակ, թէ «Ես լինիմ միջնորդ այսմ ամենայնի, եւ անվնաս պահեմ զաշխարհս Հայոց»: 10 Եւ տուեալ ի ձեռս սուտ քահանայից զգրեալսն՝ նենգաւորին Վասակայ, որոց անուանքն են չքահանայիցն այս. Չանգակ մի ոմն, Սահակ Չայնող, եւ միւս ոմն³ Պետրոս Երկաթի: 11 Եւ էին Սահակն եւ Պետրոսն ի գաւառէն Սիւնեաց. յորոց ձեռս տայր զաղտ յերանելի սպարապետն Վարդանայ նենգաւորն Վասակ զգրեալսն շրջեցուցանել ընդ աշխարհս Հայոց. զոր լուեալ թուլացելոցն ի հաւատս եւ անյուսիցն, հաւատացեալ բանից նենգաւորին՝ կորնչէին: 12 Իսկ պինդքն եւ մարտիրոսութեան տենչողքն իբրեւ լսէին զայս ամենայն բանս ցնորից՝ եւս առաւել պնդեալք զաւրանային, եւ աւուր աւետաբեր փրկութեան իւրեանց սպասէին յուսով:

ԼԵ. Եւ կատարեալ զաւուրս ձմեռնային⁴ ցրտաշունչ աւդոցն եւ հասեալ ի տան մեծ գատկին բովանդակ ուխտապահքն, եւ ամենայն աշխարհի եղել խնդութիւն, հրեշտակաց եւ մարդկան. քանզի խառնուրդք խաղաղութեան եղեն ընդ միմեանս աւետաւոր յարութեամբ կենարարին. զոր տաւնեալ ուրախութեամբ զուարճանային:

2 Եւ յետ սակաւ⁵ ինչ աւուրց անցելոց լուան, եթէ զաւր եհաս բազում ի Հեր եւ ի Չարեւանդ¹ գաւառ: 3 Եւ երանելի սպարապետն Հայոց տէրն Մա-

1 Ատ. ձմեռայնոյն

2 Ձ. ընդ դմայ. Գտ. ընդ նմա

3 ԲԳտ. մի ոմն-ի մասին ունին ծնթ. «Թուի խանգարեալ մականունն Չանգակին»: Թուի ուղղելի մի ոմն Սահակ Չայնող, եւ միւս ոմն...

4 ՏՏ. ձմերային

5 Ձ. զիետ սակաւ